<<ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ>>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## Հայաստանի շախմատի պատանիների առաջնության

## երևանյան ընտրական փուլ

**Ժամկետները՝** 15-23 փետրվար 2024թ.

**Ժամակարգը՝** 90-ական րոպե մինչև պարտիայի ավարտը, յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած 1-ին քայլից:

**Անցկացման վայրը՝** Հայաստանի շախմատի ակադեմիա/հասցե՝ ք. Երևան Շևչենո 34/:

Առաջնությունն անցկացվելու է 5 առանձին խմբերով:

**Մուտքավճարը՝** 3000 ՀՀ դրամ

**Ժամանակացույց՝**

| Ամսաթիվ | Խաղափուլ | Ժամ |
|---|---|---|
| 15 փետրվարի | 1-ին տուր | 15:00 |
| 16 փետրվարի | 2-րդ տուր | 15:00 |
| 17 փետրվարի | 3-րդ տուր | 11:00 |
| 18 փետրվարի | 4-րդ տուր | 11:00 |
| 19 փետրվարի | 5-րդ տուր | 15:00 |
| 20 փետրվարի | 6-րդ տուր | 15:00 |
| 21 փետրվարի | 7-րդ տուր | 15:00 |
| 22 փետրվարի | 8-րդ տուր | 15:00 |
| 23 փետրվարի | 9-րդ տուր | 15:00 |

***Մինչև 8 տարեկան պատանիների մրցաշար***

Մասնակցելու իրավունք ունեն առնվազն 4-րդ և 3-րդ մարզական կարգ ունեցող այն շախմատիստները, ովքեր ծնվել են 2015թ. դեկտեմբերի 31-ից հետո:

2-րդ, 1-ին մարզական կարգ և վարկանիշ ունեցող շախմատիստները մասնակցում են հաջորդ փուլից:

1-ից 20-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2024թ. մինչև 8 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

***<u>Մինչև 10 տարեկան պատանիների մրցաշար</u>***

Մասնակցելու իրավունք ունեն առնվազն 3-րդ մարզական կարգ ունեցող շախմատիստները, ովքեր ծնվել են 2013թ. դեկտեմբերի 31-ից հետո:

1-ին մարզական կարգ ունեցող շախմատիստները մասնակցում են հաջորդ փուլից:

1-ից 25-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2024թ. մինչև 10 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

***<u>Մինչև 10 տարեկան աղջիկների մրցաշար</u>***

Մասնակցելու իրավունք ունեն միայն 4-րդ կարգային շախմատիստուհիները, ովքեր ծնվել են 2014 թվականին:

1-ից 6-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստուհիները իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2024թ. մինչև 10 տարեկան աղջիկների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

***<u>Մինչև 12 տարեկան պատանիների մրցաշար</u>***

Մասնակցելու իրավունք ունեն առնվազն 2-րդ կարգ և մինչև 2025 ազգային վարկանիշ ունեցող շախմատիստները, ովքեր ծնվել են 2011թ. դեկտեմբերի 31-ից հետո:

1-ից 20-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2024թ. մինչև 12 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

***<u>Մինչև 14 տարեկան պատանիների մրցաշար</u>***

Մասնակցելու իրավունք ունեն առնվազն 1-ին կարգ և մինչև 2075 ազգային վարկանիշ ունեցող շախմատիստները, ովքեր ծնվել են 2009թ. դեկտեմբերի 31-ից հետո,

1-ից 18-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2024թ. մինչև 14 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

Ընտրական բոլոր մրցաշարերում **արգելվում է** այն շախմատիստների մասնակցությունը, ովքեր որևէ տարիքային խմբում Հայաստանի առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարում մասնակցության անհատական իրավունք ունեն:

*Մինչև 12 և 14 տարիքային խմբերում հաշվարկվելու է ազգային վարկանիշ:*

Հայաստանի պատանիների առաջնության երևանյան ընտրական փուլի մասնակիցների հայտերը ներկայացնելու **վերջնաժամկետն է 2024թ. փետրվարի 12-ը՝ 18:00:**

Մարզադպրոցների հայտերը ուղարկել info@chessfed.am էլեկտրոնային հասցեին, ըստ կանոնադրությանը կից ձևաչափի:

Գրանցվել կարող եք նաև այցելելով Հայաստանի շախմատի ֆեդերացիայի պաշտոնական կայք, գրանցվել բաժին՝ հետևյալ հղմամբ https://www.chessfed.am/am:

Գրանցումը բանկային փոխանցման դեպքում կատարվում է հետևյալ հաշվեհամարին՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԿ

ՀՎՀՀ՝ 01515033

ԲԱՆԿ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ»

Հ/Հ՝ 1510002020290100

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել մրցաշարի անվանում, անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան տվյալներ, կարգը/վարկանիշ, հեռախոսահամար:

Հարցերի դեպքում զանգահարել՝ +374 99/10 440105

Գլխավոր մրցավար

ՖԻԴԵ-ի մրցավար Գ. Մուրադյան